

# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

*Հունվարի 2-ին, հինգշաբթի, երեկոյան ժամը 8-ին, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Հայ Եկեղեցու գործերի խորհրդի անունից, նոր տարվա առթիվ Երևանում կազմակերպել էր պաշտոնական ընդունելություն։*

*Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տ. Հովհաննիսյանը, Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը, փոխ-լուսարարապետ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը, Հոգևոր Ճեմարանի փոխ-տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը, Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական կառավարչության պետ պր. Հ. Սեդրակյանը, Մայր Աթոռի դիվանապետ պր. Հ. Առաքելյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր պր. Ա. Հատիտյանը։*

*Հրավիրյալների թվում էին Երևանի քաղաքային Սովետի գործադիր կոմիտեի նախագահ պր. Գ. Փահլևանյանը, Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը, խորհրդի անդամ, պատմական գիտությունների դոկտ.-պրոֆ. Բ. Առաքելյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանը, Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության փոխ-նախագահ պր. Մ. Բաբլոյանը, «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագիր պր. Պ. Սելյանը և այլ հրավիրյալներ։*

*Ամանորի սեղանների շուրջ ստեղծվում է ջերմ և սրտագին մթնոլորտ։ Սեղանը ղեկավարում է Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը։ Առաջարկվում են սրտագին կենացներ՝ Հայրենի կառավարության է՛լ ավելի հզորության և հայ շինարար ժողովրդի պայծառ ապագայի, Ս. Էջմիածնի պայծառության և Վեհափառ Հայրապետի թանկագին կենաց արևշատության համար։*

*Ընդունելության ժամանակ խանդավառ, հուզիչ ու հայրենասիրական ջերմ խոսքեր են ասում Վեհափառ Հայրապետը, պր. Ս. Գասպարյանը, պր. Գ. Փահլևանյանը, պր. Ս. Հովհաննիսյանը, պրոֆ.-դոկտ. Բ. Առաքելյանը, պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանը, պր. Պ. Սելյանը, պր. Հ. Սեդրակյանը, պր. Հ. Առաքելյանը և պր. Ա. Հատիտյանը։*

*Ընդունելությունն անցնում է խանդավառ ու սրտագին մթնոլորտում։*